

## ԻՐԱՆԱ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1991-2021 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

Եւ Իրանի ազերիախօս շրջանների հարցը\*

**Բանալի բառեր** – Իրանի Իսլամական Հանրապետութիւն, Ադրբեջանի Հանրապետութիւն, Թուրքիայի Հանրապետութիւն, Արցախ, ԽՍՀՄ, ԱՄՆ, Իսրայէլ, ազերի, ազերիախօս շրջաններ, կրօն, ձգողականութիւն, վանողականութիւն, պանթիսթիզմ:

### Մուտք

Խորհրդային Միութեան փլուզումով 1991 թվականին անկախացած Ադրբեջանի Հանրապետութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան փոխարարելութիւններն անցած 30 տարիների ընթացքում ունեցել են իրենց մակընթացութիւններն ու տեղատուութիւնները, որոնց հիմքում ընկած է եղել ձգողականութեան եւ վանողականութեան գործոնների բարդ հակադրությունն ու համադրութիւնը:

Թէև առաջին հայեացքից թուում է, թէ բազմաթիւ պատմական, կրօնական և մշակութային ընդհանրութիւնների պատճառով երկու հարեւան երկրները պետք է լինեին սերտ գործընկերներ, սակայն անցնող երեք տասնամեակի պատմութիւնը ցոյց տուեց, որ կան արգելակիչ գործոններ, որոնք ոչ միայն չեն նպաստում նրանց յարաբերութիւնների սերտացմանը, այլև լուրջ մրցակցութեան, երբեմն էլ քողարկուած թշնամանքի մակարդակի են հասնում դրանք:

### 1. Ձգողական գործոնները երկկողմ յարաբերություններում

Իրանի Իսլամական Հանրապետութեան և Ադրբեջանի Հանրապետութեան միջև որոշակի ձգողականութիւն ստեղծող ընդհանուր եզրերից են **պատմութիւնը, կրօնը, մշակոյթը և տնտեսական համագործակցութեան** հնարաւորութիւնները:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 15. 1. 2021:

Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի մեծամասնությունը դաւանում է **խլամի շիա** ուղղությունը, ուստի 90 տոկոսով իսլամի շիա դավանանքի հետեւորդ Իրանի Իսլամական Հանրապետության հետ ընդհանուր դաւանանքի առկայությունը առաջացնում է բարոյական և արժեքային զային ընդհանուր չափանիշներ, որոնք բնականաբար կարող են նպաստել երկու երկրների մերձեցմանը:

**Պատմական առումով** Արբեջանի Հանրապետության ներկայի տարածքը եղել է Իրանի մի մասը: Իրականում այդ տարածքները Իրանից անջատուել և Ռուսաստանին են կցուել ռուս-իրանական պատերազմների հետևանքով՝ Գիլխտանի (1813 թ.) և Թիւրքմենշայի (1828 թ.) պայմանագրերի հիմամբ: Այդ իսկ պատճառով իրանական մշակոյթի ազդեցությունը առկայ է այդ տարածքում և յատկապէս վառ է իրանական կողմի յիշողութան մէջ<sup>1</sup>:

**Մշակութային ժառանգութեան** առումով գոյություն ունեն մեծ թուով նիւթական և ոչ նիւթական կոթողներ և ամանոյթներ, որոնք վկայութիւնն են ընդհանուր մշակոյթի առկայութեան: Օրինակ, Նոռուզը (Նոր Տարի), գորգագործութեան որոշակի դարոցը, պոլո<sup>2</sup> խաղը և բազմաթիւ այլ օրինակներ, իսկ գիտութեան և արուեստի ոլորտում բանաստեղծ Նիզամի Գեանջևին (1141-1209 թթ), ծնուած Ադրբեջանի այսօրուայ Հանրապետութեան Գանձակ քաղաքում, Խաղանի Շիրուանին (1120-1199 թթ), ծնուած 1120 թ. Շիրուանում (այսօրուայ Ադրբեջանի Հանրապետութեան տարածք) և բազմաթիւ այլ արուեստագէտներ և գիտնականներ, այդ ընդհանուր մշակոյթի վկայութիւնն են<sup>3</sup>: Ի դէպ նշենք, որ այդ մշակոյթը թէև իրանական է, սակայն Ադրբեջանի Հանրապետութիւնը իր պատմաշինութեան գործընթացում փորձում է իւրացնել այն և ներկայացնել որպէս իր մշակոյթի վկայութիւն:

Ադրբեջանի Հանրապետութեան անկախութիւնից յետոյ երկու երկրների **գիտամշակութային** փոխարաբերութիւնները մեծ զարգացում չեն ունեցել: Իրանի կողմից Ադրբեջանի Հանրապետութեան համալսարաններում բացուել են պարսկերէն լեզուի ամբիոններ, տեղի են ունեցել ուսանողների փոխանակութիւններ, ստորագրուել են գիտամշակութային ոլորտի համագործակցութեան պայմանագրեր, սակայն լուրջ և խորքային զարգացում չի ապահովուել, հիմնականում Իրանի ազդեցութեան տարածման նկատմամբ Ադրբեջանի Հանրապետութեան մտահոգութիւնների և Թուրքիայի ու Իսրայէլի ճնշումների պատճառով:

<sup>1</sup> گراهام فولر، قبله عالم. ژنوبولیتیک ایران، نشر مرکز، انتشارات وزارت امور خارجه، ۱۳۷۷، چاپ دوم، صفحه 160 St'u

<sup>2</sup> چوگان - Polo

<sup>3</sup> محمد رضا مجیدی، حسین صور انصاری، نقش موارد مشترک فرهنگی در همگرایی ایران و جمهوری آذربایجان، مطالعات اوراسیای مرکزی، دوره 9، شماره 2، پائیز و زمستان 1395، صفحات 341-360 St'u

Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի և Իրանի ազերիախօս շրջանների բնակչության մեծամասնության խոսակցական թիրքերենի խիստ նմանությունը՝ կրկին վկայությունն են ձգողական ընդհանուր եզրի առկայության: Սակայն նկատի պիտի ունենալ, որ յատկապես այդ գործոնի վրայ շեշտադրումով է, որ Ադրբեջանի Հանրապետությունը փորձում է Իրանի ազերիներին դէպի իրեն գրաւել: Այս առումով կարելի է ասել, որ լեզուն նմանուել է երկսայրի սուրի ու թէև մի կողմից երկու երկրներին դէպի իրար ձգելու ուժ ունի, միւս կողմից Իրանի համար վերածուել է սպառնալիքի: Դրա վկայությունն է այն հակաքարոզությունը, որ տարւում է Ադրբեջանում Իրանի էթնիկ խմբերի մայրենի լեզուն իբր արգելուած լինելու, դպրոցներում այդ լեզուով չհասաւանդուելու, հրատարակությունների չգոյութան և այլնի ուղղութեամբ<sup>4</sup>:

Ձգողական գործոններից են **տնտեսական ներուժի** օգտագործման և **առևտրային համագործակցութեան** խորացման հնարաւորությունները: Երկու երկրների հարևան լինելու իրողությունը, ցամաքային երկար սահմանի գոյությունը և ծովային կապի հնարաւորությունը՝ այդ համագործակցությունը զարգացնելուն նպաստող գործոններ են: Այդուամենայնիւ Իրանի ու Ադրբեջանի տնտեսական և առևտրային փոխյարաբերությունների և ապրանքաշրջանառութեան մակարդակը բարձր չէ, որի վկայությունն է 2020 թ. յուլիսի 24-ին Ադրբեջանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Աբբաս Մուսաւիի յայտարարությունը, ըստ որի ներկայի տնտեսական համագործակցութեան մակարդակը երկու երկրներին և ժողովրդներին վայել չէ<sup>5</sup>:

**Եզրակացնենք**, որ Ադրբեջանի Հանրապետութեան ներկա տարածքը հազարամեակներ լինելով Իրանի մի մասը՝ կրում է այդ քաղաքակրթութեան որոշ տարրերը, սակայն երկու երկրների փոխյարաբերություններում գոյութիւն ունեն նաև վանողական գործոններ:

## 2. Վանողական գործոնները երկկողմ յարաբերություններում

**Վանողական գործոններից** են միջպետական յարաբերություններում առկա Կասպից ծովի իրաւական ռեժիմի ձգգրտման հարցը, Արցախի հաւանարտությունը, Իրանի ազերիախօս շրջանների նկատմամբ Ադրբեջանի

<sup>4</sup> رسول افشلى (و ديگران)، تبیین روابط ایران و جمهوری آذربایجان با رویکرد سازه انگازی، مطالعات اوراسیای مرکزی، دوره 7، شماره 2، پاییز و بهار 1393، صفحات 237-264

<sup>5</sup> <https://www.mehrnews.com/news/4981772/%DA%AF%D8%B3%D8%AA%D8%B1%D8%B4-%D8%B1%D9%88%D8%A7%D8%A8%D8%B7-%D8%A7%D9%82%D8%AA%D8%B5%D8%A7%D8%AF%DB%8C-%D9%88-%D8%AA%D8%AC%D8%A7%D8%B1%DB%8C-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%A8%D8%A7-%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%DB%8C-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86> (2021.01.08)

Հանրապետության նկրտումները, Իրանի անջատողականներին հովանա-տորելը, կրօնական դաւանանքի նկատմամբ տարբեր մօտեցումները, կրօնի և պետության փոխարաբերությունների հակադիր ընկալումները, պատմության խեղաթիւրումը, մշակութային ժառանգության և աշխարհագրա-կան անունների և հանրայայտ դէմքերի սեփականացումը, և այլն:

**Կասպից ծովի իրաւական ռեժիմի** ձգբրտման հարցը շարունակում է մնալ երկու երկրների միջև գոյութիւն ունեցող խնդրահարոյց հարցերից մէկը: Թէև ծովի հիւսիսային սահմանները Ռուսաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի միջև ձգբրտուել են, սակայն հարաւում քարիւղի և գազի մեծ պաշարների առկայութիւնը՝ Իրանի, Ադրբեջանի և Թուրքմենստանի տարակարծութեան հիմնական պատճառն է դարձել<sup>6</sup>: Իրանի տեսակէտից իր բաժինը Կասպից ծովից նուազագոյնը 20 տոկոս է, մինչդեռ Ադրբեջանի Հանրապետութեան տեսակէտից ծովը պէտք է բաժանուի ըստ երկրների ունեցած ծովափնեայ սահմանի երկարութեան: Կասպից ծովի օգտագործման և նրա իրաւական ռեժիմի ձգբրտման հարցը ուղղակիօրէն կապուած է Իրանի Իսլամական Հանրապետութեան ազգային շահերի հետ<sup>7</sup>:

Վանողական մեկ այլ գործօն է **խլամական օրէնքների** կիրառման նկատմամբ երկու երկրների մօտեցումների տարբերութիւնը: Այն պայմաններում, երբ Իրանը թէկրատիկ պետութիւն է և Իրանի Իսլամական Հանրապետութեան պաշտոնական գաղափարախօսութիւնը հիմնուած է իսլամի վրայ, Ադրբեջանի Հանրապետութիւնը իրեն հռչակել է աշխարհիկ պետութիւն: Որպէս օրինակ յայտնենք, որ կանանց կողմից գլխաշոր կրելը Իրանում պարտադիր է, մինչդեռ Ադրբեջանի Հանրապետութիւնում արգելուած է գլխաշորով դպրոց կամ համալսարան յաճախելը: Այլ օրինակ, Իրանի Իսլամական Հանրապետութեան հիմնադիր Այաթօլլահ Հոմէյնիին արգելեց «Սատանայական այաներ» գիրքը և գրքի հեղինակ Սալման Ռուշդիին մահուան դատապարտեց, մինչդեռ Ադրբեջանի Հանրապետութիւնում այդ գիրքը հրատարակուեց որպէս թերթօն: Նշենք, որ Ռուշդին ազգութեամբ հնդիկ է, և ցայսօր ապրում է Միացեալ Թագաւորութիւնում<sup>8</sup>:

Իրանը՝ Ադրբեջանի Հանրապետութիւնում իր ազդեցութիւնը տարածելու նպատակով փորձում է յենուել **շիիզմի** վրայ: Այդ նպատակով, օրինակ, Իրանը հոգևորականներ է գործուղել Ադրբեջանի Հանրապետութիւն

<sup>6</sup> <https://www.dw.com/fa-ir/%D8%A2%DB%8C%D8%A7-%D8%A8%D9%87-%D8%AA%D9%82%D8%B3%DB%8C%D9%85-%D8%AF%D8%B1%DB%8C%D8%A7%DB%8C-%D8%AE%D8%B2%D8%B1-%D9%85%DB%8C%D8%A7%D9%86-%DB%B5-%DA%A9%D8%B4%D9%88%D8%B1-%D9%86%D8%B2%D8%AF%DB%8C%DA%A9-%D9%85%DB%8C%D8%B4%D9%88%DB%8C%D9%85/a-16728701> (2021.01.07)

<sup>7</sup> **St'U** علیرضا پور شیخیان، رژیم حقوقی دریای خزر، مشاع، تقسیم یا استمرار همکاری های چند جانبه، چشم انداز جغرافیایی (مطالعات انسانی)، سال ششم، شماره 15، تابستان 1390، صفحات 15-34

<sup>8</sup> **St'U** سید محمد رضا موسوی، مجید عباسی، روابط جمهوری اسلامی و جمهوری آذربایجان، بستر های همگرایی و زمینه های واگرایی، مطالعات اوراسیای مرکزی، دوره ۶، شماره ۲، پائیز و زمستان ۱۳۹۲، صفحات ۸۰-۶۱

և, Իրանում գործող իսլամական դպրոցներում/համալսարաններում ընդունում է Ադրբեջանի Հանրապետությունից ուսանողների: Ադրբեջանի Հանրապետությունը Իրանի կողմից շիիզմի տարածման վախից՝ փորձում է սահմանափակել երկրում իսլամական օրէնքների կիրառումը: 2020 թ. մարտի 6-ին ձերբակալուեց «Իսլամական կուսակցութեան» պատասխանատու Էլիամ Ալիևը, ով հանրայայտ հոգևորականներից է և նախապես ձերբակալուել և դատապարտուել էր երկու տարուայ ազատագրկման: Նրա մեղադրանքներից էր «Դաւաճանութեան պետութեանը» և «Աջակցութիւն այն կազմակերպութիւններին և երկրներին, որոնք Ադրբեջանի դէմ թշնամական գործողութիւն են իրականացնում»<sup>9</sup>:

Իսլամական յեղափոխութիւնից յետոյ Իրանի իշխանութիւնը ելնելով իր գաղափարախօսութիւնից՝ ինքնութեան հարցում առաջնային տեղ է տուել կրօնական գործոնին, որի հետևանքով յետ է մղուել ազգայինը, ուստի յեղափոխութեան առաջին տարիներին իրանականութիւնը նահանջ է արձանագրել: Իսկ Իրանի որդեգրած սկզբունքները արտաքին քաղաքականութեան մէջ (պաշտպանել բոլոր մուսուլմանների իրաւունքները, պաշտպանել պաղեստինցիների իրաւունքները, ԱՄՆ-ի հետ հակամարտութիւնը, անհաշտ պայքարն Իսրայէլի դէմ և այլն) պատճառ է դարձել, որ նրա դիրքերը թուլանան միջազգային ասպարէզում, որն իր հերթին Իրանի նկատմամբ տարատեսակ նկրտումների առիթ է տուել: Քանի որ Ադրբեջանի Հանրապետութեան նկատմամբ Իրանի արտաքին քաղաքականութեան ռազմավարութիւնը հիմնուած է եղել կրօնական գործօնի վրայ, դա իր հերթին առաջացրել է Ադրբեջանի Հանրապետութեան հակազդեցութիւնը: Ադրբեջանն Իրանի այդ քաղաքականութիւնը դիտարկում է որպէս իսլամական յեղափոխութեան արտահանում դէպի իր երկիր, մինչդեռ Ադրբեջանի Հանրապետութիւնը աշխարհիկ պետութիւն է:

Վանողական գործօններից է Ադրբեջանի Հանրապետութեան **արտաքին քաղաքականութեան** դէպի Թուրքիա, ԱՄՆ, Իսրայէլ և ընդհանուր առմամբ՝ արևմտեան երկրներ որդեգրած ուղղութիւնը: Ընդհանուր առմամբ՝ 1979 թ. տեղի ունեցած իսլամական յեղափոխութիւնից յետոյ թշնամական յարաբերութիւնների մէջ է ԱՄՆ-ի հետ, չի ընդունում Իսրայէլ պետութեան գոյութիւնը, արևմտեան երկրների հետ յարաբերութիւնները սահուն չեն և Թուրքիայի հետ ուժեղ մրցակցութեան մէջ է: Միւս կողմից, Իրանը փորձում է սերտացնել յարաբերութիւնները Ռուսաստանի Դաշնութեան և Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան հետ:

Անկախութիւնից անմիջապէս յետոյ՝ Ադրբեջանի Հանրապետութիւնը դիւանագիտական յարաբերութիւններ հաստատեց Իսրայէլի հետ: Նկատի

<sup>9</sup> St'u | خبرگزاری فارس (farsnews.ir) (2021.01.05) انتقام رژیم صهیونیستی از شیعیان آذربایجان | خبرگزاری فارس

ունենալով, որ երկու երկրները՝ Ադրբեջանն ու Իսրայելը Իրանը դիտարկում են որպես սպառնալիք, այդ յարաբերությունները իրայատուկ ջերմություն ստացան<sup>10</sup>: Ռազմական ու տնտեսական համագործակցությունը, ինչպես նաև արտերկրում միմեանց լոբբիիստական խմբերի ծառայություններից օգտուելը խորացել են տարեց տարի: Ռազմական համագործակցության վառ ապացույցը 2020 թ. տեղի ունեցած արցախեստան 44-օրեայ պատերազմի ընթացքում իսրայելական արտադրության անօդաչու թռչող սարքերի լայնածավալ օգտագործումն էր Ադրբեջանի Հանրապետության բանակի կողմից: Որոշ փորձագետներ այն կարծիքին են, որ Ադրբեջանի Հանրապետությունը՝ Բաքու-Թել Ավի-Անկարա եռանկյունին ստեղծել է Մոսկուա-Երևան-Թեհրան եռանկյան դիմաց<sup>11</sup>:

Վանողական մէկ այլ գործոն է **Արցախի հակամարտությունը**: Իրանցի բազմաթիւ փորձագետներ այն կարծիքին են, որ երկու երկրների թոյլ, երբեմն էլ սառն յարաբերությունների հիմնական պատճառներից մէկը Արցախի հակամարտությունն է: Մէկ կողմից Ադրբեջանի Հանրապետությունում առկա այն համոզումը, որ Արցախի առաջին պատերազմի տարիներին (1991-1994 թթ.) շիա Ադրբեջանի Հանրապետութեանն աջակցելու փոխարէն՝ Իրանը աջակցել է քրիստոնէայ Հայաստանին, և, միւս կողմից արտաքին քաղաքականութեան մէջ Հէյդար Ալիևի ժամանակներից սկսած այն մօտեցումը, որ Արցախի հակամարտութեան ադրբեջանամէտ լուծումը և այսպէս ասած «հողերի վերադարձը» հնարաւոր է Ադրբեջանի Հանրապետութեան քարիւղի և գազի արտահանման և արտածման գործում արևմտեան երկրների և ընկերությունների ներգրաւմամբ, պատճառ դարձան, որ Ադրբեջանի Հանրապետութիւնն իր արտաքին ուղղուածութիւնում թեքուի դէպի Թուրքիա և Արևմուտք ու հեռանայ Իրանից:

Նշելի է, որ ադրբեջանցիներն նման պայմաններում են լուրեր տարածում այն մասին, որ Իրանը 1991-1994 թթ. պատերազմի ժամանակ օգնել է Հայաստանին, երբ Իրանը ռազմական խորհրդատուութեան և զինամթերքի հայթայթման ուղղութեամբ օժանդակել է Ադրբեջանի Հանրապետութեանը: Դրա ամենացայտուն վկայութիւններից մէկը Բաքում Իրանի նախկին զինուորական կցորդ, Հէյդար Ալիևի զինուորական նախկին խորհրդական, Իրանի Արդեբիլ նահանգի նախկին նահանգապետ և Արդաբիլ նահանգից Իրանի իսլամական խորհրդարանի նախկին պատգամաւոր Մանսուր Հադի-ղաթիուուի 2017 թ. ապրիլի 4-ին «Ազարիհա» կայքէջին տուած հարցազ-

<sup>10</sup> Տէւ Մոյնի, ամիդ Ղաթի, Իրան և Իսրայել և Թաթիր Ան Բր Գտտրշ Ղաթի ՏիաՏի-Ամնիտի Իսրայել և Ժմորի Անրիաթան, Ղաթալատ Դրասիա Տէւ Մոյնի, Տիաթալատ 415-431 Մրկի, Դոր 10, Տմար 2, Քաթիզ և Ղաթալատ 1396,

<sup>11</sup> Տէւ Մոյնի, Գաթի Ղաթի Իրան և Ժմորի Անրիաթան, Ղաթալատ Դրասիա Մրկի, Մրկ Ղաթալատ Մալի Բին Մալալի Դաթաթա Կաթու և Ղաթալատ ՏիաՏի, Մալ Ղաթալատ 4, ԹաթիՏալատ և Քաթիզ 1388, Տիաթալատ 84-83,

րոյցն է, որում նա մանրամասնօրէն խօսում է այդ մասին<sup>12</sup>: Աւելացնենք, որ 1993 թ. Ադրբեջանի Հանրապետութեան Իմիշլիի և 1994 թ. Սաբիրաբադի շրջանում Իրանը փախստականների համար կառուցել է ապաստարաններ<sup>13</sup>: Ադրբեջանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան նախկին դեսպան Ալի Բիգդելին յայտնում է, որ Ադրբեջանի Հանրապետութիւնում խօսում էին Հայաստանին՝ Իրանի օժանդակութեան մասին և այդ ուղղութեամբ մեծ քարոզչութիւն էին կատարում, որը երբ մենք ուսումնասիրեցինք, պարզուեց, որ անհիմն է և Իրանի որդեգրած քաղաքականութիւնը նման բան բացարձակապէս թոյլ չի տայ<sup>14</sup>:

Այդուամենայնիվ արձանագրենք, որ Իրանը՝ Արցախի պատերազմի սկզբից ի վեր բազմիցս փորձել է միջնորդի դեր խաղալ՝ հակամարտութեան լուծման և տարածաշրջանում խաղաղութեան հաստատման ուղղութեամբ: Որպէս օրինակ նշենք, 1992 թ. Թեհրանում տեղի ունեցած Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի Իսլամական հանրապետութիւնների պետական այրերի միջև բանակցութիւնները: Կամ 2020 թ. Արցախի և Հայաստանի դէմ Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած 44-օրեայ պատերազմի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործոց նախարարի քաղաքական հարցերով օգնական և Ղարաբադի հարցում Հասան Ռոհանիի յատուկ ներկայացուցիչ Աբբաս Արադչիի միջնորդական այցելութիւնները Բաքու, Մոսկուա և Երևան<sup>15</sup>:

Երկու երկրների միջև վանողական մէկ այլ և չափազանց կարևոր գործօն է Ադրբեջանի Հանրապետութեան բացայայտ կամ քողարկուած յաւակնութիւնը՝ իրենց ձևակերպմամբ՝ «Հարաւային Ադրբեջան»-ի, այլ խօսքով՝ **Իրանի ազերիախօս շրջանների** նկատմամբ: Այդ շրջաններն են Իրանի Արդեբիլ, Արևելեան և Արևմտեան Ատրպատականներ, Զանջան, Համադան նահանգները և Աստարայի ու Ղազուխի որոշ մասերը: Որոշ փորձագէտներ այն կարծիքին են, որ այս գործօնը երկու երկրների անբաւարար և սառը յարաբերութիւնների գլխաւոր և հիմնական պատճառն է<sup>16</sup>:

<sup>12</sup> <http://azariha.org/1979/%d8%ad%d9%82%db%8c%d9%82%db%8c%aa-%d9%be%d9%88%db1-%d8%a7%db%8c%db1%db%86-%d8%af%d8%b1-%d8%ac%d9%86%da%af-%d9%82%db1%db%8a7%db%8a7%db%86-%d9%88-%d8%ac%d9%85%db%87%db%87%db%88%db%8a7%db%8c%db%8c%db%8c%db%85/> (2021.01.08)

<sup>13</sup> Տե՛ս Էթելաաթ օրաթերթ, 1373 թ.

<sup>14</sup> <https://www.isna.ir/news/8311-10310/%D9%81%D8%B1%D8%A7%D8%B2-%D9%88-%D9%86%D8%B4%D9%8A%D8%A8-%D8%B1%D9%88%D8%A7%D8%A8%D8%B7-%D8%A7%D9%8A%D8%B1%D8%A7%D9%86-%D9%88-%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%D9%8A-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%D9%8A%D8%AC%D8%A7%D9%86-%D8%B3%D9%81%D9%8A%D8%B1-%D8%B3%D8%A7%D8%A8%D9%82-%D8%A7%D9%8A%D8%B1%D8%A7%D9%86> (2021.01.04)

<sup>15</sup> <https://www.dw.com/fa-ir/%D8%B9%D8%B1%D8%A7%D9%82%DA%86%DB%8C-%D8%AF%D8%B1-%D9%82%D9%81%D9%82%D8%A7%D8%B2-%D8%A7%D9%85%D8%A7-%D9%88-%D8%A7%DA%AF%D8%B1%D9%87%D8%A7-%D8%AF%D8%B1-%D8%A8%D8%A7%D8%B1%D9%87-%D8%B7%D8%B1%D8%AD-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%A8%D8%B1%D8%A7%DB%8C-%D9%82%D8%B1%D9%87%D8%A8%D8%A7%D8%BA/a-55447789> (2020.11.02)

<sup>16</sup> مرتضى ابازرى، حبيب رضا زاده، محمد كريم زاده، قوم گرانی و تاثیر آن بر روابط جمهوری اسلامی ایران و آذربایجان، فصلنامه تحقیقات سیاسی بین المللی، دانشگاه آزاد اسلامی واحد شهرضا، شماره سیزدهم، زمستان 1391، صص 205-239

### 3. Վանողական գործոնների ուժեղացումը իրանա-ադրբեջանական յարաբերություններում

Յիշեցնենք, որ է Մեծ Թուրանի ձեւավորման համար 1918 թ. արհեստականօրէն ստեղծուած Ադրբեջանի Հանրապետութեան իշխանութիւնների առջեւ Թուրքիայի երիտօրրք առաջնորդների դրած նպատակներից երկրորդը եղել է Իրանից ազերիախօս շրջանների անջատումը: Առաջինը՝ Հայկական Ղարաբաղի ու Զանգեզուրի զավթումն ու հայաթափումն էր, ուստի երբ 1919 թվականին բարձր գնահատելով Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովի ջանքերը՝ Ղարաբաղն Ադրբեջանին բռնակցելու գործում, Բաքվից նրան առաջարկեցին ստանձնել Ադրբեջանի ներքին գործերի նախարարի պաշտոնը, վերջինս 1919 թ. սեպտեմբերի 2-ի պատասխան նամակում Ղարաբաղից իր հեռանալը տվյալ պահին անթույլատրելի համարեց՝ գտնելով, որ պետք է զարգացնել ձեռք բերուած յաջողությունը և Ադրբեջանի իշխանութիւնը տարածել նաև Զանգեզուրի վրա: Դրանով ժամանակակիցների կողմից ոչ առանց հիմքի թուրքական լրտես համարուող Սուլթանովն անթաքույց ակնարկում էր, որ Ղարաբաղի և Զանգեզուրի՝ Ադրբեջանին միացումը պայմաններ կստեղծի Իրանի Ատրպատականի նկատմամբ յավակնութիւններ ցուցաբերելու համար<sup>17</sup>:

Այս նույն նպատակը որոշ վերիվայրումներով հետապնդուել է նաև Խորհրդային ժամանակաշրջանում՝ Խոհրդային Միութեան և Խորհրդային Ադրբեջանի իշխանութիւնների կողմից<sup>18</sup>: 1991 թ. Ադրբեջանի Հանրապետութեան անկախութիւնը նոր լիցք է հաղորդել այդ ձգտմանը:

Իրանի Իսլամական Հանրապետութեան և Ադրբեջանի Հանրապետութեան միջև դիւանագիտական յարաբերութիւններ են հաստատուել միայն 1992 թ. յունուարին, մինչդեռ՝ Թուրքիայի Հանրապետութիւնը Ադրբեջանի Հանրապետութեան անկախութիւնը ճանաչել է վերջինիս անկախութիւն հռչակելուց երեք օր յետոյ:

Անցնող տարիներին Ադրբեջանի Հանրապետութեան պետական այրերի այցելութիւններն Իրան աւելի շատ են եղել, քան Իրանի պետական այրերի այցելութիւնները Ադրբեջան: Օրինակ, Ադրբեջանի Հանրապետութեան նախագահ Հէյդար Ալիևը երեք անգամ՝ 1994 թ., 1997 թ. և 2002 թ. այցելեց Իրան: 1994 թ. Ալիևի Իրան այցելութեան ժամանակ տարբեր ոլորտներին վերաբերող աւելի քան 90 համագործակցութեան պայմանագրեր են կնքուել

<sup>17</sup> Աւելի մանրամասն տես Արմեն Յ Մարուքյան, Թուրքիայի արյունոտ ձեռքը Ղարաբաղում, Վէմ հանդես, 2020, N2, էջ 240:

<sup>18</sup> Աւելի մանրամասն տես Սարգիս Մկրտչեան, Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրութիւնների կենտրոն, Եր, 2019 թ., Երկրորդ հրատարակութիւն, էջ 22-43



երկու երկրների միջև: 1990–ական թուականներին Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Ալի Աքբար Ռաֆսանջանին միայն մէկ անգամ այցելեց Ադրբեջան:

Անցարծ շուրջ 30 տարիներին երկու երկրների փոխարաբերությունները՝ Ադրբեջանի Հանրապետության նախագահների որդեգրած մոտեցումների քննության հիման վրայ՝ կարելի է ամփոփել հետևեալ կերպ:

**Առաջին նախագահ Այազ Մութալիբովի** ժամանակ (1991–1992 թթ.) երկիրը նոր էր անկախացել: Ու թէև դեռ վերջնականապես ձևաորուած չէր Ադրբեջանի արտաքին քաղաքականության ուղղուածությունը, սակայն Մութալիբովը կողմնակից էր Իրանի հետ յարաբերությունների զարգացմանը և Արցախի հարցում Իրանի միջնորդութանը<sup>19</sup>:

**Երկրորդ նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը** (1992–1993 թթ.) անտեսելով դիւանագիտական նորմերը՝ բացայայտ կերպով խօսում էր Միացեալ Ադրբեջանի՝ Ադրբեջանի Հանրապետության և Իրանի ազերիախօս շրջանների միաւորման մասին: Նա արծարծում էր Իրանում ազերիների իրաւունքների ոտնահարման հարցը, կոչ ուղղում Իրանի ազերիներին պայքարել անկախութեան համար: Էլչիբեյը յայտարարեց, որ չի ընդունում Իրանի տարածքային ամբողջականութիւնը, հովանաւորեց Իրանի անջատողականներին և թոյլատրեց գրասենեակ հիմնել և գործունէութիւն ծաւալել Ադրբեջանի Հանրապետութիւնում: Իր շրջանում Իրանի պատմութեան խեղաթիւրմամբ բազմաթիւ գրքեր և յօդուածներ հրատարակուեցին: Ուստի Էլչիբեյի ժամանակ երկու երկրների յարաբերությունները սկսեցին սառչել<sup>20</sup>:

2017 թ. Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների գրասենեակի հրաւիրած «Իրանի Իսլամական Հանրապետութեան մոտեցումներն ու լուծումները Կովկասում» թեմայով նիստում ունեցած իր ելույթում Ադրբեջանի Հանրապետութիւնում Իրանի նախկին դեսպան Մոհսէն Փաքալիը վկայում էր. «Էլչիբեյն ասում էր, որ Ադրբեջանը չի անկախանայ, եթէ Թաւրիզը այդ երկրի մայրաքաղաքը չլինի», «Էլչիբեյն ասում էր, ես անընդհատ Խոյի և Մարանդի երազն եմ տեսնում»<sup>21</sup>:

Ադրբեջանի Հանրապետութեան **երրորդ նախագահ Հէյդար Ալիևը** բացայայտ կերպով չէր խօսում Ադրբեջանի Հանրապետութեան և Իրանի ազերիախօս շրջանների միաւորման մասին, սակայն իր իշխանութեան օրոք, իսկ այնուհետև իր տղայի՝ Իլիամ Ալիևի շրջանում, կատարուել են գործեր,

<sup>19</sup> St' u مرتضى ابانزى، حبيب رضا زاده، محمد كريم زاده، قوم گرائى و تأثير آن بر روابط جمهورى اسلامى ايران و آذربايجان، فصلنامه تحقيقات سياسى بين المللى، دانشگاه آزاد اسلامى واحد شهرضا، شماره سيزدهم، زمستان 1391، صفحات 205-239

<sup>20</sup> St' u Mahan Abedin, Iran at sea over Azerbaijan, Asia Times, At:Http://www.atimes.com/atimes/middle-east/FI28AKOL.html, (Accessed on: 28/09/2004).

<sup>21</sup> 2021.01.07 (irdiplomacy.ir) فراز و نشیب های که روابط ایران و آذربايجان تجربه کرد

որոնք վկայում են Իրանի տարածքների նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների նկրտումների մասին<sup>22</sup>:

Իրանի ազերիախոս շրջանների նկատմամբ Ալիևների ժամանակ դրսևորուած հավակնությունների մասին են վկայում՝ Հարաւային Ադրբեջանի, Միացեալ Ադրբեջանի, Իրանի ազերիների իրաւունքների ոտնահարման, մայրենիի դասաւանդման և այլ նմանատախիւ թեմաներով տարատեսակ խորհրդատողովների և համագումարների կազմակերպման, լրատուամիջոցներով այդ հարցերի ներկայացման, կուսակցութիւնների կողմից այդ թեմաների արծարծման թոյլտուութիւնը, Աշխարհի ազերիների օրուայ հռչակումը, իրանցի անջատողականներին Ադրբեջանի Հանրապետութիւնում ապաստան և գործունէութեան իրաւունք տալը, վերոյիշեալ թեմաներով հրատարակութիւնները և այլն<sup>23</sup>:

Մէկ այլ օրինակ է Հէյդար Ալիևի ժամանակ Ադրբեջանի Հանրապետութեան հինգերորդ դասարանի դասագրքերի շապիկի վրայ հրատարակուած նկարը, որտեղ Իրանի Արևելեան և Արևմտեան Ատրպատական, Արդեբիլ, Համադան, Ջանջան, Ղազուին և Գիլան նահանգները ներկայացուել են Ադրբեջանի Հանրապետութիւն անունով և դրօշով: Նույն շրջանում Ադրբեջանի Հանրապետութեան Գիտութիւնների ակադեմիան հրատակարեց մի ատլաս, որտեղ Իրանի որոշ շրջաններ ներկայացուել են որպէս Ադրբեջանի Հանրապետութիւն:

1995 թ. Հէյդար Ալիևի ժամանակ էր, որ չեղարկուեց Իրանի անդամակցութիւնը Ադրբեջանի քարիւղի կոնսորսիւմին, որն իր հերթին բացասաբար ազդեց երկու երկրների փոխյարաբերութիւնների վրայ<sup>24</sup>: Ադրբեջանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան նախկին դեսպան Ալի Բիգդելին «Փլուզումից յետոյ Ադրբեջանի Հանրապետութեան և Իրանի յարաբերութիւնների ելևէջները» խորհրդատողովի ժամանակ յայտնոմ էր, որ «...Կասպից ծովի կապակցութեամբ լուրջ բանակցութիւններ էին տեղի ունենում, որի արդիւնքում երկու կողմերը պայմանաւորուեցին Կասպից ծովի նաւթի 10%-ը լինի Իրանի բաժինը, որը մի գործընթացում, որից անկեղծութեան հոտ չէր գալիս, նախ իջաւ և դարձաւ 5% և վերջում այն պատրուակով, որ Իրանի մասնակցութեան իրաւունքը գործընթացում Ադրբեջանի իշխանութեան իրաւասութեան ներքոյ չէ, չեղարկուեց և այդ բաժինը տրուեց Թուրքիային»<sup>25</sup>: Բաքու-Ջէյխան նաւթանոլի

<sup>22</sup> St' u مرتضى ابانزى، حبيب رضا زاده، محمد كريم زاده، قوم گرائى و تأثير آن بر روابط جمهوری اسلامى ايران و آذربايجان، فصلنامه تحقيقات سياسى بين المللى، دانشگاه آزاد اسلامى واحد شهرضا، شماره سيزدهم، زمستان 1391، صفحات 205-239

<sup>23</sup> St' u محمد جواد جعفرى ارجمند (و ديگران)، بررسى علت هاى سردى روابط ايران و جمهورى آذربايجان، مطالعات اوراسيائى مركزى، دوره 7، شماره 1، بهار و تابستان 1393، صص 57-80

<sup>24</sup> St' u صادق زيباڪلام (و ديگران)، آمريكا و تأثير آن بر دستيائى ايران به هدف هاى خود در منطقه قفقاز، مطالعات اوراسيائى مركزى، دوره 7، شماره 1، بهار و تابستان 1393، صص 81-100

<sup>25</sup> <https://www.isna.ir/news/8311-10310/%D9%81%D8%B1%D8%A7%D8%B2-%D9%88-%D9%86%D8%B4%D9%8A%D8%A8-%D8%B1%D9%88%D8%A7%D8%A8%D8%B7>

ուղղութեան ընտրութիւնը ևս համարում է Ադրբեջանին՝ Իրանից, Ռուսաստանից և Հայաստանից հեռացնելու պատճառներից մէկը<sup>26</sup>: Նկատի պէտք է ունենալ, որ այդ նախամուղի անցկացումը Վրաստանով տնտեսապէս հիմնաւորուած չէր, սակայն ԱՄՆ-ը և Թուրքիան մեծ ջանքեր գործադրեցին դա իրականացնելու համար՝ Իրանին, Ռուսաստանին և Հայաստանին շրջանցելու և նրանց ազդեցութիւնը նվազեցնելու նպատակով:

Յամենայնդէպս, Հէյդար Ալիևը որդեգրեց մի կողմից Արևմուտքի, ներառեալ Թուրքիայի և Իսրայէլի և, միւս կողմից Ռուսաստանի և Իրանի միջև միջին քաղաքականութիւն, փորձեց պահպանել հաւասարակշռութիւն, երկրի զարգացման մողել ընտրեց արևմտեան մողելը, միաժամանակ՝ փորձելով զարգացնել յարաբերութիւնները տարածաշրջանի երկրների հետ: 1992-1995 թթ. Իրանի Իսլամական Հանրապետութիւնը Ադրբեջանի Հանրապետութեան հետ առևտրատնտեսական համագործակցութեան ոլորտում առաջին տեղն էր գրաւում, սակայն հետագային նա այդ դիրքը զիջեց Ռուսաստանին և Թուրքիային<sup>27</sup>:

**2003 թուականին Ադրբեջանի չորրորդ նախագահ Իլիամ Ալիևի** իշխանութեան գալուց յետոյ երկու երկրների միջև յարաբերութիւնները սկսեցին աւելի նուազել: Որոշ փորձագէտներ այն կարծիքին են, որ դրա հիմնական պատճառներից մէկը Արցախի հակամարտութիւնն էր: Իլիամ Ալիևի ժամանակ Ադրբեջանի Հանրապետութեան՝ Թուրքիայի և Իսրայէլի հետ փոխյարաբերութիւնների սերտացումը՝ նոր թափ և նոր որակ ստացան:

Իրանի հարցում զուգորդուել են նաև Ադրբեջանի Հանրապետութեան և ԱՄՆ-ի և Իսրայէլի շահերը: Այդ պատճառով էլ նշեալ վերջին երկու պետութիւնները Իրանի դէմ իրենց գործողութիւններում երբեմն կատարում են քայլեր, որոնք բխում են Ադրբեջանի Հանրապետութեան շահերից: Բրիտանական «Դը Գարդիան» թերթը գրում էր, որ Իսրայէլի գաղտնի ծառայութեան՝ Մուսադի նախկին պետ Մեիր Դագանը (Meir Dagan)՝ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Նիկոլաս Բըրնսի (Nicholas Burns) հետ 2007 թ. տեղի ունեցած հանդիպման ժամանակ ներկայացնում է հինգ կետից բաղկացած Իսրայէլի ռազմավարութիւնը Իրանի նկատմամբ: Դրանցից մէկը ռեժիմի հարկադիր փոփոխութիւնն է: «Դագանն ասում է, որ աւելին պէտք է անել Իրանում ռեժիմի փոփոխութեան համար, հնարաւորութեան դէպքում

%D8%A7%D9%8A%D8%B1%D8%A7%D9%86-%D9%88-%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%D9%8A-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%D9%8A%D8%AC%D8%A7%D9%86-%D8%B3%D9%81%D9%8A%D8%B1-%D8%B3%D8%A7%D8%A8%D9%82-%D8%A7%D9%8A%D8%B1%D8%A7%D9%86 (2021.01.04)

<sup>26</sup> **St' u** 66--97 صص 1388، پاییز 1388، بررسی علل و پیامدهای حضور ایالات متحده در قفقاز، فصلنامه ژئوپلیتیک، سال پنجم، شماره دوم، پاییز 1388، صص 66--97

<sup>27</sup> **St' u** روابط جمهوری اسلامی ایران و جمهوری آذربایجان، چالش ها و فرصت ها، دفتر مطالعات سیاسی، مرکز پژوهش های مجلس شورای اسلامی، 1392.03.13

ուսանողական ժողովրդավարական շարժումներին և իշխող ռեժիմին ընդդիմադիր էթնիկ խմբերին (օրինակ ազերիներ, քուրդեր, բելուջներ...) հովանավորելով»<sup>28</sup>:

Պանթիրքական այն կազմակերպությունները, որոնք Իրանի ազերիախօս շրջանների նկատմամբ յուսկնություններ ունեն՝ ազերիների կապակցությամբ օգտագործում են «ազգ» բառը և ի հարկէ, Իրանը համարում են բազմազգ երկիր: Նրանք յայտնում են, որ Իրանի ազերիախօս շրջաններում ադրբեջանական թիրքերէնով լրատուամիջոց, գիրք, թերթ և առհասարակ որևէ հրատարակություն գոյություն չունի, Իրանի ազերիների նկատմամբ կիրառում է տնտեսական և ընկերային խտրականություն, Իրանի պետությունը ծրագրուած կերպով աշխատում է ազերիախօս շրջանների բնութեան, օրինակ՝ Ուրմիայի լճի ոչնչացման ուղղութեամբ: Պանթիրքական կազմակերպությունները յայտնում են, որ մինչև Փահլևիների իշխանութեան գալը Իրան անունով երկիր գոյություն չի ունեցել, յայտարարում են, որ Իրանում աւելի քան 40 տոկոս (որոշ աղբիւրներ երբեմն նոյնիսկ 50 տոկոսից աւելի) ազերիախօս բնակչութիւն գոյութիւն ունի և այլն<sup>29</sup>:

Իրանի ազերիների շրջանում քարոզչութիւն կատարելու և գրգռութիւններ առաջացնելու մէջ մեծ դեր ունեն Իրանից սահմաններից դուրս, յատկապէս Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետութիւններում պատրաստուող ու ձայնասփիւռի (ռադիօ), արբանեակային հեռուստաալիքների և համացանցի միջոցով սփռուող հաղորդումները: Իրանի հիւսիսային և հիւսիս-արևմտեան շրջանների բնակչութեանը հասանելի են Թուրքիայի և Ադրբեջանի ձայնասփիւռի և հեռուստաընկերութիւնների ալիքները:

Ադրբեջանի Հանրապետութեան պետական պաշտօնական այրերի և ոչ կառավարական կազմակերպութիւնների, կուսակցութիւնների և անհատների նմանատիպ գաղափարների և պահանջների արծարծումը, բնականաբար առաջացրել է իրանական կողմի թէ՛ պաշտօնական և թէ՛ անպաշտօն հակազդեցութիւնը: Ի պատասխան՝ Իրանում որոշ կազմակերպութիւններ և անհատներ արծարծում են Հիւսիսային Իրանի տարածքը Իրանին կցելու պահանջը: Յղում անելով Գիւլիստանի և Թիրքմենչայի պայմանագրերին և նշելով, որ այդ պայմանագրերի ժամկէտն աւարտուել է, նրանք յայտնում են, որ այդ տարածքները պատերազմի հետևանքով են Իրանից բռնագրաւուել և պահանջում են քայլեր ձեռնարկել Հիւսիսային Իրանը նայր հողին

<sup>28</sup> <https://www.theguardian.com/world/us-embassy-cables-documents/120696> (2021.01.09)  
<sup>29</sup> St'u 1396 محمد رضا محسنی حقیقی، پان ترکیسم در ایران، از ادعا تا واقعیت، سئل  
<http://azariha.org/2237/%D9%BE%D8%A7%D9%86%E2%80%8C%D8%AA%D8%B1%DA%A9%D8%B3%DB%8C%D9%85-%D8%AF%D8%B1-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86%D8%8C-%D8%A7%D8%B2-%D8%A7%D8%AF%D8%B9%D8%A7-%D8%AA%D8%A7-%D9%88%D8%A7%D9%82%D8%B9%DB%8C/>  
 (2021.01.04)

վերադարձնելու ուղղութեամբ: Այս երկու միտումները Ղարաբաղյան երկրորդ պատերազմի շրջանում այնպես միախառնվեցին իրար որ Իրանը դիտորդի դերում հայտնվեց՝ իր սահմանների մոտ տեղի ունեցածի հանդեպ եւ անգամ ողջունեց՝ Ղարաբաղի ազատագրուած տարածքների վերադարձն Ադրբեջանին: Սակայն Հայաստան-Իրան ցամաքային կապը խզելու ուղղութեամբ Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից ձեռնարկուող հետեւողական քայլերը նրան այսօր ստիպում են վերանայել իր մոտեցումները:

**Ամփոփենք՝** եզրակացնելով, որ Մութալիբովից յետոյ Ադրբեջանի Հանրապետութիւնը մշտապէս կիրառել է պանազերիական մօտեցումը եւ շեշտը դնելով թուրք-ազերիական գործօնի վրայ՝ բացայայտ կամ քողարկուած կերպով ձգտել և ձգտում է Մեծ Ադրբեջանի ստեղծմանը: Իսկ Ադրբեջանում սահմանափակուել է իսլամական գործօնը՝ ոչ միայն Թուրքիային՝ որպէս աշխարհիկ մոդել, ընդօրինակելու պատճառով, այլ կրօնական գործօնի հիմամբ Իրանից եկող սպառնալիքը կանխելու նպատակով<sup>30</sup>:

## Եզրակացութիւններ

Հիմք ընդունելով վերոշարադրուածը և վերլուծելով Իրանի և Ադրբեջանի փոխյարաբերութիւնները՝ եզրակացնում ենք, որ հակառակ երկու երկրների միջև ամկայ բազմաթիւ ձգողական գործօններին, ինչպիսք են՝ պատմական, մշակութային, կրօնական և էթնիկական ընդհանուր եզրերը, այդ յարաբերութիւնները անցնող շուրջ 30 տարիների ընթացքում հեշտ ու սահուն չեն ընթացել և այսօր, ատլի շատ խնդիրներ և անվտանգութիւն գոյութիւն ունեն երկու երկրների միջև, քան սերտ յարաբերութիւններ:

Երկու երկրների փոխյարաբերութիւններում վանողական գործօններից են Կասպից ծովի իրաւական ռեժիմի ձգգրտման հարցը, Իրանի կրօնական գործունէութիւնը Ադրբեջանի Հանրապետութիւնում, Արցախի հիմնահարցը, Թուրքիայի Հանրապետութեան և Իսրայէլի ազդեցութիւնը Ադրբեջանի Հանրապետութիւնում, ԱՄՆ-ի նպատակները Իրանի ուղղութեամբ և ի վերջոյ Իրանի ազերիախօս շրջանների նկատմամբ Ադրբեջանի Հանրապետութեան նկրտումները:

Թէև վերոնշեալ վանողական գործօնները կապած են Իրանի ազգային անվտանգութեան հետ, սակայն Իրանի ազերիախօս շրջանների հարցը լրջագոյն և ամենամեծ սպառնալիքն է Իրանի ազգային անվտանգութեան համար, որը յղի է Իրանի մասնատման վտանգով, ինչն իր հերթին մեծագոյն սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգութեան համար:

<sup>30</sup> سجاد طالبی، روابط جمهوری اسلامی ایران و جمهوری آذربایجان، چالش ها و فرصت ها، دفتر مطالعات سیاسی، مرکز پژوهش های مجلس شورای اسلامی، 1392.03.13.

Անկախությունից յետոյ Ադրբեջանի Հանրապետությունը իր ժողովրդի ինքնությունը խարսխել է լեզուական և էթնիկական գործոնների վրայ, մինչդեռ իսլամական յեղափոխությունից յետոյ Իրանի իշխանությունը ինքնութան հարցում առաջնային տեղ է տուել իսլամական գաղափարախօսութանն ու արժեհամակարգին: Ադրբեջանը միացել է Թուրքիա-Իսրայել առանցքին, մինչդեռ Իրանը փորձում է մօտենալ Ռուսաստանին: Ուստի Իրանի թշնամի (Իսրայել) կամ մրցակից (Թուրքիա) պետությունները լաւապէս օգտագործում են Իրանի ազերիների հարցը՝ Իրանին թուլացնելու և հնարաւորութան դէպքում այն մասնատելու համար:

**Սարգիս Մ. Մկրտչեան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են վերջին մէկ դարի ընթացքում պանթիւրքիզմի՝ Իրան ներթափանցելու փորձերի եւ Իրանի Ատրպատականում պանթիւրքական կազմակերպությունների գործունէութեան պատմությունը: Այս թեմայով հրատարակել է մէկ աշխատութիւն և բազմաթիւ գիտական յօդուածներ:

Էլեկտրոնային հասցէ՝ sarkis.mkrtchian@gmail.com

Summary

## IRANIAN-AZERBAIJANIAN RELATIONS IN 1991- 2021 And the issue of Azeri-speaking regions of Iran

Sargis M. Mkrtchyan

**Key words** – Islamic Republic of Iran, Republic of Azerbaijan, Republic of Turkey, Artsakh, USSR, USA, Israel, Azeri, Azeri-speaking regions, religion, attraction, repulsion, Pan-Turkism.

Relations between the Islamic Republic of Iran and the Republic of Azerbaijan, which became independent after the collapse of the Soviet Union, have had difficult ups and downs over the past three decades. They were conditioned by the attractive and repulsive factors existing between the two countries.

Attracting factors are history, religion, language, being contiguous, opportunities for economic cooperation, etc. Among the repulsive factors are the issue of clarifying the legal regime of the Caspian Sea, the issue of Artsakh, different perceptions of the state-religion relations, the direction of foreign policy,

especially the aspirations of the Republic of Azerbaijan towards the Azeri-speaking regions of Iran.

The problems of the Iranian Azeris and the ethnic groups of Iran in general, raised by the Pan-Turkic and the Pan-Azeri circles without any real basis, are mainly carried out for political and mercenary purposes. Modern communication resources and various means of propaganda are used. History, symbols, reality are distorted, cultural heritage is appropriated.

Since independence, the Republic of Azerbaijan has anchored the identity of its people on linguistic and ethnic factors, while after the Islamic Revolution, the Iranian authority has given priority to Islamic ideology and values. Azerbaijan has joined the Turkey-Israel-US axis, while Iran is trying to get closer to Russia. At present, Iran's enemy (Israel) or rival states (Turkey) make good use of the issue of Iranian Azeris to weaken Iran and divide the country if possible.

During the past 30 years, in fact, repulsive factors have prevailed over gravitational factors. Today, there are more problems and distrust between the two countries than close relations.

The overt or covert aspirations of the Republic of Azerbaijan towards the Azeri-speaking regions of Iran are directly related to Iran's national security. It is fraught with the danger of the division of Iran, which is not only a blow to Iran, but is the greatest threat to Armenia's national security.

Резюме

## **ИРАНО-АЗЕРБАЙДЖАНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1991-2021 ГОДАХ**

И вопрос азербайджанских областей Ирана

Саргис М. Мкртчян

**Ключевые слова** – Исламская Республика Иран, Азербайджанская Республика, Турецкая Республика, Арцах, СССР, США, Израиль, азербайджанские области, религия, притяжение, отталкивание, пантюркизм.

В отношениях между Азербайджанской Республикой, ставшей независимой в результате распада Советского Союза, и Исламской Республикой Иран за прошедшие три десятилетия были сложные колебания. Они были обусловлены факторами притяжения и отталкивания, существовавшими между двумя странами.

К числу факторов притяжения относятся история, религия, язык, сопринадлежность, возможности экономического сотрудничества и т. д. В число факторов отталкивания входят вопрос об уточнении правового режима Каспийского моря, проблема Арцаха, разные восприятия взаимоотношений между государством и религией, направленность внешней политики и особенно претензии Азербайджанской Республики в отношении азербайджанских областей Ирана.

Обсуждения пантюркистскими и паназеристскими кругами вопросов иранских азербайджанцев и вообще этнических групп Ирана, будучи лишены реальных оснований, в основном проводятся в политических и корыстных целях. Используются современные средства коммуникации и различные способы пропаганды. Искажаются история, символы, реальность, присваивается культурное наследие.

После обретения независимости Азербайджанская Республика основывала идентичность своего народа на языковых и этнических факторах, между тем власти Ирана после исламской революции поставили на первое место в идентичности исламскую идеологию и систему ценностей. Азербайджан присоединился к оси Турция-Израиль-США, тогда как Иран старается сблизиться с Россией. В настоящее время государства, враждебные Ирану (Израиль) или конкурирующие с Ираном (Турция), хорошо используют вопрос иранских азербайджанцев для ослабления Ирана и, при возможности, его расчленения.

За последние 30 лет факторы отталкивания фактически преобладали над факторами притяжения. Сегодня между двумя странами больше проблем и недоверия, чем тесных отношений.

Открытые или скрытые претензии Азербайджанской Республики в отношении азербайджанских областей Ирана непосредственно связаны с национальной безопасностью Ирана. Это чревато опасностью расчленения Ирана, что является не только ударом по Ирану, но и величайшей угрозой национальной безопасности Армении.



## REFERENCES

1. **Alireza Poursheykhiyan**, Regime e hoghughiye daryaye Khazar, moshā, taghsim ya estemrar e hamkarihayē chandjanebe, Cheshmandaz e joghrafiyayi (Motaleat e ensani), Sal e sheshom, Shomareye 15, Tabestan 1390, Safheye 15-34 (**In Persian**).
2. **Bahram e Amirahmadyan**, Barresiye ellal va payamadhaye hozur e Eyalat e Motahadeh dar Ghafghaz, Fasnameye Geopolitic, Sal e panjom, Shomareye dovvom, Payiz e 1388, Safahat e 66-97 (**In Persian**).
3. Dastgiriye sarparast e hezb e islam dar Baku, entegham e regime e sahyonisti az shiyyan e Azerbaijan, Khabargozariye Fars (**In Persian**).
4. **Elahe Kulayi**, Chehel o sevvomin neshast e takhasosiye Ghafghaz e Jonubi va Jomhuriye Islami e Iran, Negahi Digar, Markaz e motaleat e aaliye beynolmelaliye daneshkadeye hoghugh va olum e siyasi, 9 Aban e 1389 (**In Persian**).
5. Faraz va neshebhayi ke ravabet e Iran va Azerbaijan tajrobe kard (irdiplomacy.ir) (2021.01.07) (**In Persian**).
6. **Graham Fuller**, Ghebleye Alam, Geopolitic e Iran, Nashr e Markaz, Entesharat e Vezarat e Omur e Khareje, 1377, Chap e dovvom, Safheye 160 (**In Persian**).  
<https://bit.ly/3j74naJ> (04.01.2021) (**In Persian**).
7. **Majid e Abbasi, Seyed Mohammadreza Mousavi**, Ravabet e Jomhuriye Eslami va Azerbaijan, bastarhayē hamgarayi va zaminehayē vagarayi, Motaleat e Eurasiyaye markazi, Doreye 6, Shomareye 2, Payiz va zemestan e 1392, Safheye 61-80 (**In Persian**).
8. **Majidreza Momeni, Omid e Rahimi**, Taghabol e Iran va Israel va taasir e an bar gostaresh e ravabet e siasi-amniyatiye Israel va Jomhuriye Azerbaijan, Motaleat e Eurasiyaye markazi, Doreye 10, Shomareye 2, Payiz va emestan e 1396, Safheye 415-431 (**In Persian**).
9. **Maruk'yan A.**, T'urk'iayi aryunot dzerk'ē Gharabaghum, "Vēm" hamahaykakan handes, Yer., 2020, N 2 (**In Armenian**).
10. **Mkrтч'ean S.**, Pant'iwrk'akan hosank'nerē zhamanakakits' Iranum, Yerkrorđ hratarakut'iwn, Yer., Arevmtahayots' harts'eri usumnasirut'yunneri kentron, 2019, ēj 22-43 (**In Armenian**).
11. **Mohammad Jaafar e Javadi Arjmand (va digaran)**, Barresiye ellathaye sardi e ravabet e Iran va Jomhuriye Azerbaijan, Doreye 7, Shomareye 1, Bahar va tabestan 1393, Safahat e 57-80 (**In Persian**).
12. **Mohammad Reza Majidi, Hoseyn Souransari**, Naghsh e mavaris e moshtarak e farhangi dar hamgarayi e Iran va Jomhuriye Azerbaijan, Motaleat e Eurasiyaye markazi, Doreye 9, Shomareye 2, Payiz va zemestan e 1395, Safheye 341-360 (**In Persian**).
13. **Mohammadreza Mohseni Haghighi**, Pan-Turkism dar Iran, az eddea ta vagheiyat, Sal e 1396,
14. **Morteza Abazari, Habib e Rezazadeh, Mohammad e Karimzadeh**, Ghomgerayi va taasir e an bar ravabet e Jomhuriye Islamiye Iran va Azerbaijan, Fasnameye tahghighat e siyasi beynolmelali, Daneshgah e Azad e Islami vahed e Shahreza, Shomareye sizdahom, Zemestan e 1391, Safahat e 205-239 (**In Persian**).
15. **Omolbonin Chaboki**, Chaleshaye ravabet e Iran va Jomhuriye Azerbaijan, Motaleat e Eurasiyaye markazi, Markaz e motaleat e melli beynolmellali daneshkadeye hoghugh va olum e siyasi, Sal e dovvom, Shomareye 4, Tabestan va payiz e 1388, Safheye 63-84 (**In Persian**).
16. **Rajab e Izadi**, Negaghi be yek dahe chalesh bar sar e hovviyat e Azerbaijan, Hovviyat, melliyyat, ghommiyyat, Majmueye maghalat, Be kushesh e Hamid e Ahmadi, Tehran,

Moaseseye tahghighat va toseeeye olum e ensani, 1383, Chap e dovvom, Tehran, Moaseseye tahghighat va toseeeye olum e ensani, 1386 **(In Persian)**.

17. **Rasool e Afzali (va digaran)**, Tabyin e ravabet e Iran va Jomhuriye Azerbaijan ba rooykard e sazehengari, Motaleat e Eurasiyaye markazi, Doreye 7, Shomareye 2, Payiz va zemestan e 1393, Safheye 237-264 **(In Persian)**.
18. Rusznameye Etelaat, 16 tir sal e 1373 **(In Persian)**.
19. **Sadegh e Zibakalam (va digaran)**, America va taasir e an bar dastyabi e Iran ba hadafhaye khod dar mantagheye ghafghaz, Motaleat e Eurasiyaye markazi, Doreye 7, Shomareye 1, Bahar va tabestan e 1393, Safheye 81-100 **(In Persian)**.
20. **Sajjad e Talebi**, Ravabet e Johuriye Islami Iran va Jomhuriye Azerbaijan, chalesha va forsatha, Daftar e motaleat e siyasi, Pazhuheshaye majles e shoraye e islami, 1392.03.13 **(In Persian)**.